Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Հայաստանի արտահանման 2025-2030 թվականների ռազմավարական ծրագրի

միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ

2024 թվական

Միջոցառում	**Կատարման ընթացիկ վիճակը**
Միջոցառում 5.1 ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում	2024թ. ընթացքում «Հայաստանի արտահանման 2025-2030թթ. ռազմավարական ծրագրի» և գործողությունների ծրագրի նախագծերի մշակման ընթացքում կազմակերպվել են բազմաթիվ մասնագիտական քննարկումներ, այդ թվում՝ ոլորտային քննարկումներ ֆոկուս խմբերի հետ, հավաքագրվել են առաջարկություններ և դիտողություններ: Արդյունքում, լրամշակված փաստաթղթերը, որոնց մեջ ներառվել են խորհրդակցությունների ընթացքում ներկայացված գաղափարները, շրջանառվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում և ամփոփվել են՝ ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինների, տնտեսության տարբեր ոլորտներ ներկայացնող առևտրային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների կարծիքին ներկայացվելու համար:

Ձևաչափ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Ռազմավարությունից բխող գործողությունների/միջոցառումների ծրագրի 2022-2024թթ. չկատարված (մասնակի կատարված) միջոցառումների վերաբերյալ

Ծրագրի հերթական համարը	Գործողությունների/միջոցառումների անվանումները և կատարման ժամկետները	Գործողությունների/միջոցառումների չկատարման (մասնակի կատարման), այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	Չկատարված (մասնակի կատարված) միջոցառումների կատարման կանխատեսվող ժամկետ
1	2	3	4
5.1 ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում	Ռազմավարության հաստատման ժամկետ՝ 2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	ԱՄՆ ՄԶԳ «Տնտեսական հիմքեր՝ հանուն դիմակայուն Հայաստանի» ծրագրի աջակցությամբ իրականացվել են աշխատանքներ Արտահանման խթանման ռազմավարության մշակման համար: Ռազմավարության աշխատանքներն ուղեկցվել են բազմաթիվ մասնագիտական քննարկումներով: Ռազմավարությունը ներկայացվել և քննարկվել է պետական կառավարման համակարգի մարմինների, տնտեսության տարբեր ոլորտներ ներկայացնող առևտրային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների հետ: Քննարկումների արդյունքում լրամշակված նախագիծը 2025թ. ապրիլի 1-ին տասնօրյակում կներկայացվի հանրային քննարկման՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում: Դիտարկումները և առաջարկությունները օրենքով սահմանված ժամկետներում հավաքագրելուց հետո նախագիծը կամփոփվի և կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:	2025թ. հունիսի 3-րդ տասնօրյակ